

ՆՈՒԹԵՐ ՀԱՅԵՐԷՆԻ ՄԱՍԿՈՒԹԵՆ ՀԱՄԱՐ

Մի լեզու կոկ է, եթէ նրա բառերի արտասանելը առանձին դժուարութիւն չունի։ Դորա համար հարկաւոր է, որ լեզուի բառերը շատ երկար չլինին և ձայնաւորների սւ բաղաձայների փոխադարձ կանոնաւոր դորժածութիւն ունենան։ Օրինակ. մի օտարական և կամ մանուկ՝ օրէնսդրութիւն կամ օրէնագէտ բառն այնպէս հեշտ չի կարող արտասանել և միտք պահել, որպէս օրինադրութիւն կամ օրինագէտ, չնայելով որ դոցա տարբերութիւնը մի հնչիւն է միայն. բայց այդ մի հնչիւնը փոխում է բառի նկարագիրն ամբողջովին, տալով նրան ձայնաւորների և բաղաձայների ներդաշնակութիւն։ Մի այսպիսի նախադասութիւն. ծխախոտ ծախողը ծխամորճ է ծխում, վերին աստիճանի անդուրեկան է. մինչդեռ թութուն վաճառողը ծխում է, կլինէր անհամեմատ փափուկ նախկինի համեմատութեամբ։ Բժշկուհին բժշկում է բժշկարանում, և բժշկուհին ¹⁾ բուժում է բուժարանում. կառավարական շրջաններում մտածում են նախազգուշացուցիկան միջոցներ ձեռք առնելու մասին խօսելայի դէմ և կառավարական շրջաններում (բուրակներում) մտածում են նախապահիկ միջոցներ ձեռք առնելու մասին քօլերայի դէմ։ Այս նախադասութիւնների և բառերի միտքը թուարանական ճշտութեամբ նոյնն է, այն տարբերութեամբ միայն, որ առաջին օրինակներն անտանկի են թէ արտասանելու, թէ գրելու և թէ լսելու համար, մինչդեռ վերջինները թէ դուրեկան են և թէ փափուկ։ Այս կանոնը կարևոր է բանաստեղծութիւնների, վէպերի և մանաւանդ թատերական գրուածքների համար, որոնք ներքին բովանդակութեան հետ ամեն ջանք գործ պիտի դնեն խնայելու, նոյն իսկ շոյելու մերականջը, մեր կոկորդն ու շնչառութիւնը նաև արտաքինով, ձևով։

¹⁾ Մենք յետոյ ցոյց կը տանք, որ աւելի ճիշտ ձևն է *Բուժուհի*։

Մեր բառերն անտանելի երկար են, մեր հնչիւններն անասելի կոպիտ և մեր գրողներն ու խօսողները գէթ այս խնդրում բաւական անտարբեր ու տգէտ։ Անգարմանելի չէ այս ցաւը, եթէ մենք մի քիչ ուշադրութեամբ վերաբերունք մեր լեզուին և օգտուել կամենանք լեզուների մէջ տիրող ընդհանուր օրէնքից։ Այդ օրէնքն այն է, որ լեզուի մէջ տիրող քերականական ձևերն ու բառերը ժամանակի ընթացքում մաշւում և պարզւում են. գրաբարի բարդ, ընդարձակ և դժուարին քերականութեան տեղակ մենք ունինք հիմա համեմատաբար շատ պարզ և հասարակ քերականութիւն. նորա երկար և արձակ բառերը մաշուել կարճացել են շատ անգամ մինչև անճանաչելի դառնալու չափ։ Այդպէս կարճանալ և հեշտանալու ամենալաւ օրինակ այն բառերն են ներկայացնում, որոնք ամենից շատ են գործածական ժողովրդի բերանում. օրինակ գրաբարի առնել—արարի. հետզհետէ կրել է հետեւեալ ձևափոխութիւնները. առնել, այրել, այնել, աննել, էնել, ըննել, որոնցից վերջին երեք ձևերը դեռ այսօր էլ կենդանի են. յուզի արկանել (ճանապարհ գցել) աստիճանաբար մաշուելով դառել է ուղարկել, ըղարկել, դարկել, ղրկել, խրկել։

Բառերի այդ զարգացումը դիտելի անելու համար զննում ենք անունների հետեւեալ ցանկը, Բարձր Հայոց բարբառի համեմատ.

Հովիսիմէ, Հոռօմսիմա, Հօռօս, Հօլօս, Հօլօ, Հօլիկ, Հօլլիկ.

Շողակաթ. Շողան, Շողիկ, Շողեր, Կաթօ, Կաթին.

Մովինար. Մօլիկ, Մօլիկ.

Յովհաննէս, Օհաննէս, Օհան, Օնիկ, Օնէ.

Աւետիք, Աւետիս, Աւէս, Աւէտ, Աւօ.

Մկրտիչ, Միկիչ, Մոկուչ, Մըկօ.

Յարութիւն, Յարօ, Արթին, Արութ, Արօ.

Առաքել, Առօ. Բարթուղիմէոս, Բարթեղ, Բաթօ.

Պետրոս, Պետօ. Հմայեակ, Համօ.

Ալեքսանդր, Ալեքսան, Ալեք, Ալօ.

Մի թուցիկ համեմատական հայեացք այս ձևերի վրայ բաւական է համոզելու, որ մենք ուսմիկ ձևերն և արտայայտութիւնները շատ էլ արհամարհելու իրաւունք չունենք, ընդհակառակը մեծապէս ծանրացնում և կոպտացնում ենք լեզուն շարունակ առաւելութիւն տալով արդէն հնացած և կիրառութիւնից ընկած գրաբար ձևերին։ Թէ մենք կրթութենէն շատ

անգամ փչացնում ենք ռամիկ ձևերը, այդ մենք դեռ առիթ
կունենանք ասպացուցանելու. առ այժմ բերում ենք մի օրինակ
միայն.

«Թօն արա, թաթաւ արան,
Գարի հացը բօլ արա».

Երգում է գիւղացի մանուկը անձրևի դիմաց:

«Մայրենի լեզուի» հեղինակ պ. Տէր-Ղևոնդեանը դորա
փոխարէն գրել է Գամառ Քաթիպաի հետևեալ բանաստեղծու-
թիւնը:

«Անձրև, անձրև ցած արի,
Բացուր ցորեն ու գարի»:

Երկուսն էլ տառացի միևնոյն միտքն են պարունակում.
Ներքուստ ուրեմն նոյնն են, բայց արտաքուստ վերջինս
ծանրացրած, կոպտացրած և արտասանութիւնն անտանելի
կերպով դժուարացրած է:

Մանկան ոտանաւորի թէ՛ առաջին և թէ՛ երկրորդ տողը բաղ-
կացած է 14 հնչիւններից, որոնցից 7 ձայնաւոր, իսկ 7-ը բա-
ղաձայն. այն էլ հիւսուած մի այնպիսի ներդաշնակ վայելչու-
թեամբ, որ ամեն մի բանաստեղծի կարող էր իբրև օրինակ
ծառայել: Սօթը վանկից են բաղկացած և՛ Գ. Քաթիպաի
տողերը, բայց իբրեւ կոպիտ, իբրեւ անյաջող. ոչ վանկերի
թեթևութիւնը, ոչ ձայնաւորների և բաղաձայների ներդաշնա-
կութիւնը, ոչինչ չի մնացել նախկինից: Առաջին ոտանաւորի
մէջ միայն մի ծանր հնչիւն կայ. ց. իսկ Գ. Ք. ի ոտա-
նաւորն ունի այդպիսի 7 հատ. 2 ձ, 3 ց, 1 ծ և 1 ս. միայն
այդ հնչիւնների քանակը մի այդպիսի կարճ հատուածում բա-
ւական է փչացնելու լեզուի էստետիք տպաւորութիւնն ամ-
բողջովին:

Առաջին ոտանաւորն ունի 10 ա, 2 օ, 1 ը 1 ի. ուրեմն
վերին աստիճանի նուազային:

Երկրորդն ունի 5 ա, 3 ե, 2 ի, 2 ու. 1 ո (օ) նոյնպէս
անյաջող: Առաջինի կազմութիւնն այնպէս է, որ առանց դը-
ժուարութեան կարելի է սովորեցնել 3—5 տարեկան երեխա-
ներին, իսկ երկրորդն ուղիղ արտասանել անկարող են շատ
անգամ 7—10 տարեկան մանուկները: Ի վերջոյ ասելի պատ-
կերաւոր անելու համար այս համեմատութիւնը, դնում ենք
առաջին և երկրորդ ոտանաւորը ուղղահայեաց գծերով և գէ-

բօներով, որոնցից զէրօները ձայնաւորներ են ներկայացնում.
 քսկ ուղղահայեաց գծերը բաղաձայն:

Առաջին ոտանաւորը.

$$10101010101010=7+7=14$$

$$10101010101010=7+7=14$$

Երկրորդ ոտանաւորը.

$$011101011101101010=7+11=18.$$

$$10110110101101010=6+9=16.$$

Բացատրութիւններ կարծեմ այլ ևս աւելորդ են:

Մի աւելի աչքի ընկնող և պարզ օրինակ տուած կլինեմ
 ժողովրդի և մասնաւորապէս ռամիկ մանուկների մայրերի լե-
 գուն կովելու և զարգացնելու ընդունակութեան, եթէ դնեմ
 այն թուերը, որոնք գործ են ածում նոքա խաղի ժամանակ,
 համեմատելով մեր գրականութեան մէջ ընդունուած գրաբար
 թուերի հետ: Այդտեղ, իբրև մի ցոլապատկերի մէջ, ընթերցո-
 ղը պիտի տեսնի կենդանի լեզուի և կենդանի ձևերի առաւե-
 լութիւնը մեր ներկայ գրականի և կամ հին գրաբարի համե-
 մատութեամբ:

Տասներմէկ, տասներկու, տասնե- Տամէկ, տաէրկու, տաիրեք,
 րեք, տասնըչորս, տասընհինգ, տաչորս, տահինգ, տավեց,
 տասընվեց, տասնեօթը, տաս- տաեօթ, տաութ, տաիննը,
 նըութը, տասնըիններ, քսան, սա (20), սամէկ, սաէրկու,
 քսանըմէկ, քսաներկու, քսաներեք, սաերեք, սաչորս, սահինգ,
 քսանըչորս, քսանըհինգ, քսանը- սավեց, սաեօթ, մաութ, սա-
 վեց, քսանեօթ, քսանութ, քսա- իննը, էռ (30), էռմէկ, էռ-
 նիննը, երեսուն, երեսունըմէկ, երկու, էռիրեք, էռչորս, էռ-
 եռսաներկու, եռեսներեք, եռես- հինգ, էռվեց, էռեօթ, էռութ,
 նըչորս, եռեսնըհինգ, եռեսնըվեց էռիննը, քառ, քառմէկ,
 եռեսնեօթը, եռեսնութը, եռես- քառէրկու, քառիրեք, քառ-
 նիննը, քառասուն, քառասնը- չորս, քառհինգ, քառվեց,
 մէկ, քառասներկու, քառասներեք, քառեօթը, քառութը, քառ-
 քառասնըչորս, քառասնըհինգ, քա- իննը, յիւուն...:
 ռասնըվեց, քառասնեօթը, քառաս-
 նութը, քառասնիննը, յիսուն...:

Ընդամենը 154 վանկ. ըաղ- Ընդամենը 104 վանկ.
 կացած է 436 հնչիւնից եւ իւ- բաղկացած 224 հնչիւնից.
 ըաքանչիւր վանկին զալիս է իւրաքանչիւր վանկին գա-

2⁰/₁₁ հնչիւն։ Այս ամենն ես ար- լիս է միջին հաշուով 2¹/₃ տասանում եմ 20 վայրկեանում հնչիւն։ Այս շարքը ես արտա- Մի ըրպէս ուրեմն կարելի է սանում եմ 13 վայրկեանում, կրկնել 3 անգամ, մի ժամում մի ըրպէս 4¹/₃ անգամ, մի- 180 անգամ ժամում 290 անգամ։

Տարբերութիւնը կարելի է հսկայական անուանել և առա-ւելութիւնը ամեն բանով բարբառի կողմն է. նա կարճ է, փա-փուկ է և թեթև։ Անասելի հեշտ է հնչելը, գրելը և թէ տպելը։ Առևտրական մեծ հայրենիքի՝ ինչպէս նաև զինուորական վար-ժութիւնների ժամանակ, երկար արտասանութեամբ թուերն, ահագին կորուստ են պատճառում ժամանակի։ Այս առթիւ դիտել եմ ռուս և գերմանացի զինուորականների պետարու-թիւններն արագ արտասանելիս թուերն ու բառերը, ֆրան-սիականի համեմատութեամբ, որ անզուգական է իր կարճու-թեամբ ու պարզութեամբ. մինչև einundzwanzig, двадцать-двое և կամ բա՛ն և մէկ տպելը, երեք անգամ կարելի է տեսլ սամէկ կամ ֆրանսերէն vingt un. Այս հանգամանքն անզնահա-տելի է մանաւանդ մանկավարժական տեսակէտով։ Մեր գրա-կան թուերով մի ժամում, ինչպէս տեսանք, կարելի է մօտա-ւորապէս 180 վարժութիւն անել. բարբառով՝ 290։—Վեց ամ-սի ընթացքում, օրական հաշուելով մի ժամ, առաջինը կունենայ 82,400 վարժութիւն. երկրորդը 52,200. այսինքն, բարբառի տուած արդիւնքն հաւասար պայմաններում գրեթէ երկու ան-գամ աւելի է գրականից։ Բազմապատկեցէք այս ամենը բազ-մաթիւ տարիների, բազմաթիւ դպրոցների և առևտրական հիմ-նարկութիւնների վրայ և պիտի գտնէք, որ բարբառի և առ-հասարակ կենդանի ձևերի առաւելութիւնն իսկապէս հսկայա-կան է ¹⁾։

Գ. ՎԱՆՑՑԱՆ

¹⁾ Այս և յաջորդ յօդուածներս կապ ունին և օրգանապէս բղխում են «Մուրճ»-ի մէջ տպուած մեր նախորդ յօդուածնե-րից. «Հայերէնի նուագայնութիւնը», «Հայերէն գերանունների սեռը», «Նիւթեր հայերէնի մշակութեան համար», կրկին «Նիւ-թեր հայեր. մշակ. համար» 1896—9 թ.։